# ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

## ԴԱՍ 2.22. Ճապոնիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները: Բնակչությունը

. . .

*Միյաձիմա կղզին ունի գեղեցիկ բնություն, հարմարավետ լողափ: Ամենուրեք ծաղկում է բալենին, միյաձիմայի թխկին, որը Ճապոնիայում հայտնի է իր մուգ կարմիր գույնով: Նրա տերևներից փաթաթում են մոմիձիմանձու կոչվող կարկանդակներ: Կղզին ամբողջությամբ պահպանվում է որպես ազգային պարկ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից որպես բնության թանգարան, որտեղ ազատ ման են գալիս բծավոր մարալները և կապիկները: Մարալը սինտոիզմում սուրբ կենդանիներ են, քանի որ ճապոնացիները համարում են, որ այդ կենդանիները ուղարկվել են աստվածների կողմից: Ցամաքի հետ կղզին կապված է լաստանավով:*